ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ նոյեմբերի 2022 թվականի №___Ա
ք. Երևան

«Ժ ԵՎ Կ ՀԷԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվություններն ու այլ տեղեկատվությունը, ինչպես նաև անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի №308Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված հավելվածի՝ էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության Հանձնաժողով ներկայացման կարգի №2 հավելվածի №2-2 ձևով սահմանված՝ արտադրված էլեկտրական էներգիայի վերաբերյալ տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 25-ն է,

գ) «Ժ ԵՎ Կ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացրել Որոշմամբ սահմանված ժամկետից հետո՝ 2022 թվականի հուլիսի 29-ին,

դ) Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 13-ից Հանձնաժողովն Ընկերության

նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է 2022 թվականի սեպտեմբերի 13-ի № ԳԲ/34.3-Մ2-4/3160-2022 գրությամբ,

ե) Ընկերությունը 2022 թվականի սեպտեմբերի 28-ի 01/04 գրությամբ նշելով որոշակի տեխնիկական բնույթի խնդիրներ, ըստ էության ընդունել է խախտման փաստը,

զ) Իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Տեղեկատվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջը, սակայն մինչև պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ հանձնաժողովի որոշման ընդունումը վերացրել է խախտումը՝ Հանձնաժողով ներկայացնելով 2022 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով Տեղեկատվությունը, և դրա հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի (թույլտվության) պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի (թույլտվության) պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, և առկա չէ խախտման կատարման կրկնակիություն, ինչպես նաև նախկինում նշված խախտումը թույլ չի տրվել, որի պարագայում, Հանձնաժողովի գնահատմամբ, հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Ընկերության նկատմամբ Որոշմամբ սահմանված Տեղեկատվության ներկայացման ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 13-ին հարուցված վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
___ նոյեմբերի 2022թ.